



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



ԾԱՌԻՆՈՒՄ ԵՏԲ ԵՐԿՐՈՐԴ ԿՐԻԱԿԻ

22 ՅՈՒՆԻՄԱՐ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Դեպի Վերականգնում	Էջ 2
Ծանուցումներ	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
 (58.13-59.7)

Այսպէս կ'ըսէ Տէրը.- «Եթէ Շաբաթ օրը, իմ սուրբ օրս, հրաժարիս քու ցանկութիւններդ կատարելէ, եթէ Աստուծոյ նուիրուած Շաբաթ օրը ուրախարար ու նուիրական համարես, եթէ գայն պատուես՝ քու ընթացքդ փոխելով եւ թշնամական խօսքերէ հեռու մնալով, եւ յոյսդ Տիրոջ վրայ դնես, այն ատեն երկրի բարիքները պիտի պարգեւեմ քեզի եւ քեզի պիտի տամ այն ժառանգութիւնը որ քու հօրդ՝ Յակոբի խոստացայ: Ահա ես՝ Տէրս ըսի»:

Միթէ կը կարծէք թէ Տէրը ձեզ փրկելու կարողութիւնը չունի՞, կամ փակե՞ց իր ականջը, որպէսզի ձեզ չլսէ: Ո՛չ: Բայց ձեր մեղքերը պատճառ կ'ըլլան որ խրամատ բացուի ձեր եւ

Աստուծոյ միջեւ, այնպէս՝ ինչպէս ձեր անօրէնութիւններուն պատճառով Աստուած երես դարձուց եւ չորրմեցաւ ձեզի: Որովհետեւ ձեր ձեռքերը արիւնով պղծուած են եւ ձեր մատները՝ մեղքով. ձեր շրթները սուտ խօսեցան, ձեր լեզուները անիրաւութեան գործիք եղան: Չկայ մէկը որ արդարութիւնը պաշտպանէ. չկայ մէկը որ իրաւունքով դատ տեսնէ. դուք

ձեր շահերուն համար սուտերու կ'ապաւինիք եւ ուրիշները կը խաբէք. չարութիւն կը յղանաք եւ մեղք կը ծնանիք: Ձեր լարած դաւերը քարբերու հակիթներ են, որոնցմէ ուտել ուզողը մահ կը գտնէ, որովհետեւ իժ է անոնց մէջիւնը: Ձեր հիւսած դաւերը սարգի ոստայն են, որոնցմէ հագուստ չ'ըլլեր եւ բանի չեն ծառայեր: Դուք բնաւ չէք կրնար արդարանալ ձեր գործերով, որովհետեւ

ձեր գործերը անօրէն գործեր են եւ ձեր ձեռքէն միայն անիրաւութիւն կու գայ: Պատրաստ էք միշտ չարիք գործելու, անմեղ արիւն թափելու չէք վարանիր. միայն մեղաւոր խորհուրդներ կը սնուցանէք եւ ձեր այս ընթացքով կործանումի ու դժբախտութեան պատճառ կ'ըլլաք:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՏԻՄՈԹԷՆՈՍԻՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
 (4.12-5.10)

Հաւատացեալներուն օրինակ եղիր խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ: Մինչեւ գալս հոգ տար իրենց՝ Աստուծոյ խօսքէն կարդալով, յորդորելով զիրենք եւ սորվեցնելով: Անփոյթ մի՛ գտնուիր այն շնորհքին նկատմամբ որ

մարգարէական հոգիով քեզի տրուեցաւ, երբ երէցները ձեռք դրին քու վրայ: Այս ըսածներուն մասին խորհէ եւ գանոնք գործի վերածելու աշխատէ, որպէսզի ամէն մարդ յայտնապէս տեսնէ քու յառաջդիմութիւնդ: Ուշադիր եղիր թէ՛ դուն քեզի եւ թէ՛ սորվեցուցածիդ, եւ միշտ ալ այսպէս մնա՛, գիտնալով որ այդ ձեռով ո՛չ միայն ինքզինքդ կը փրկես, այլ նաեւ բոլոր քեզ լսողները:

Հաւատացեալ-ներուն օրինակ եղիր խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատովդ եւ մաքուր կենցաղովդ:

Երբեք խստութեամբ մի՛ յանդիմաներ ձեր մէկը, այլ մեղմութեամբ յորդորէ գայն, ինչպէս հօրդ պիտի ընէիր: Երիտասարդները եղբօրդ տեղը սեպէ, պառաւները՝ մօրդ, իսկ երիտասարդուհիները քրոջդ տեղը դիր եւ ամենայն մաքրութեամբ մօտեցիր անոնց: Պատուէ եւ խնամէ ա՛յն այրիները որոնք իսկապէս որբեւայրի են: Իսկ երբ այրի մը գաւազներ ու թոռներ ունի, պէտք է անոնք նային իրեն, որպէսզի սորվին բարեպաշտութիւնը նախ տան մէջ կիրարկել՝ ծնողներէն իրենց տրուած խնամքին փոխարէն հոգ տանելով անոնց, որովհետեւ Աստուծոյ համար ա՛յդ է իրաւ եւ ընդունելի բարեպաշտութիւնը: Իսկական այրին այն է՝ որ

... ձեր մեղքերը պատճառ կ'ըլլան որ խրամատ բացուի ձեր եւ Աստուծոյ միջեւ...

մէկը չունի, յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած է եւ գիշեր-ցերեկ աղօթքով ու խնդրանքով կ'անցընէ իր ժամանակը: Իսկ հանգստութիւն ու վայելք փնտռող այրին կենդանի մեռած մըն է արդէն: Այնպիսիներուն այս պատուէրները տուր որպէսզի անարատ ըլլան: Իսկ մէկը որ իրեններուն եւ մանաւանդ իր ընտանիքի անդամներուն հոգ չի տանիր, այնպիսին իր հաւատքը ուրացած մըն է, շատ աւելի գէշ՝ քան անհաւատ մը:

Այրի սեպէ միայն ա՛յն կիները որոնք վաթսուներ անց են, մէկ անգամ ամուսնացած, եւ բարի գործերով վկայուած են, այսինքն՝ զաւակներ մեծցուցած, հիւրասէր եղած, ճամբորդ հաւատացեալներուն խոնարհաբար ծառայած, նեղութեան մէջ եղողներուն օգնած, եւ իրենք զիրենք ամբողջութեամբ բարեգործութեան տուած են:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(3.13-21)


Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ.- «Ոչ ոք երկիրք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկիրքէն, ուր կը գտնուէր: Եւ ինչպէս որ Մովսէս պղնձեայօճը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ

Աստուած իր Որդին աշխարհ ղրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար:

«Եւ դատապարտութիւնը այս է. հակառակ անոր որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով

որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են»:

... Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ:



ԴԷՊԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ.

Կոջ Հայ Ժողովուրդին՝
Տագնադաւար Հալէուէն

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՀԱՅՐԱՊԵՏ

Աստուծոյ Որդւոյն մարդեղացումի խորհուրդով օծուն այս օրերուն, տագնապահար բայց միշտ կանգուն Հալէպ քաղաքէն հայրական կոչ կ'ուղղենք հայ ժողովուրդին՝ վերանորոգ հաւատքով ու յոյսով իրենց հայեացքները ու մտածումները դարձեալ սեւեռելու Սուրբոյ հայութեան վրայ:

Արդարեւ, անցնող շուրջ հինգ տարիներուն տառապեցաւ ու տագնապեցաւ Սուրբոյ մեր սիրելի ժողովուրդը: Յաճախ մահուան սարսափն ու Ֆիզիքական քանդումի երկիւղը պատեցին իր կեանքը. մերկառոյցները դիմազրաւեցին հաւոր դժուարութիւններ. ամայացան հայ շունչով ու ստեղծագործ ոգիով բաբախող հայկական թաղերը. տնտեսական տագնապը դարձաւ ամէնօրեայ մղձաւանջ. մահը խլեց նաեւ կեանքը մեր զաւակներուն ու յատկապէս մեր ժողովուրդի պաշտպանութեան նուիրուած մեր քաջ տղոց եւ պայմաններու պարտադրանքով ոմանք հեռացան...: Սակայն, հակառակ ստեղծուած ծանր կացութեան, համայնքը մնաց կանգուն՝ շնորհիւ իր զաւակներուն ամուր կամքին ու իր հոգեւոր թէ ազգային ղեկավարներու ամբողջական նուիրումին: Յարգա՛նք Սուրբոյ մեր սիրելի ժողովուրդին: Տագնապալից օրերուն Սուրբոյ հայութիւնը առանձին չմնաց: Մեր ազգը, Հայաստանէն սկսեալ մինչեւ Լիբանան եւ ի սփիւռս աշխարհի, օգնութեան ձեռք երկարեց Սուրբոյ

իր եղբայրներուն ու քոյրերուն: Սուրիոյ հայու-
թիւնը, իր կարգին, իմաստութիւնը ունեցած միաս-
նական ոգիով բոլորուելու իր կառոյցներուն
շուրջ եւ Շտապի Մարմին ստեղծելու, որպէսզի
կարենայ մէկ կողմէ՝ համայնքին դիմագրաւած
ընդհանրական հարցերուն լուծումներ որոնել,
եւ միւս կողմէ՝ ստացուած օժանդակութիւնները
բաշխել համապատասխան կարիքներու առաջ-
նահերթութեան:

Սուրիոյ հայութեան աջակցութեան ծիրէն
ներս, Հայաստանի պետութեան ցուցաբերած
զօրակցութեան առընթեր, ընդառաջելով Մեր
կոչին, Կաթողիկոսարանէն ներս հաստատուած
Սուրիոյ հայութեան օգնութեան յատուկ Ֆոն-
տին կատարուեցան օժանդակութիւններ՝
գաղութներու, բարեսիրական հաստատութիւն-
ներու եւ անհատներու կողմէ: Յիշեալ օժանդա-
կութիւնները հանգրուանային կերպով
փոխանցուեցան Շտապ Մարմինին՝ Հալէպի
Ազգային Առաջնորդարանին ճամբով: Այս
առիթով Մեր բարձր գնահատանքն ու ջերմ
շնորհակալութիւնը կ'ուզենք յայտնել բոլոր
նուիրատուներուն: Առաքեալ կ'ըսէ՝ «եթէ
մարմինին մէկ անդամը ցաւի՝ բոլոր անդամներն
ալ միասին կը ցաւին» (Ա. 2 Կր 12. 26): Մէկ ազգի
պատկանելիութեան գիտակցութենէն մղուած,
մեր ազգի գաւակները իրենց զօրակցութիւնը
գործնապէս արտայայտեցին տառապանքի մէջ
գտնուող Սուրիոյ հայութեան:

Պատի՛ւ մեր ազգին:

Վերջին շաբաթներուն խաղաղութեան ծիա-
ծանը սկսած է կամար կապել Սուրիոյ երկինքին
վերեւ: Երկրէն ներս ու յատկապէս Հալէպի
մէջ տեղի ունեցող քաղաքա-ապահովական
զարգացումները, շրջանային թէ միջազգային
աշխարհաքաղաքական պայմաններու հոլովոյթը
ու միջպետական մերձեցումները, Սուրիոյ
տազնապի լուծման ազդանշանները սկսած են
նկատուիլ: Ստեղծուած այս դրական միջոցառումը
Սուրիոյ հայութիւնը պէտք է մղէ վերանորոգ
յոյսով ու ամուր վճռակամութեամբ լծուելու
իր հաւաքական կեանքը վերականգնելու, վե-
րակազմակերպելու ու վերաշխուժացնելու
հրամայական աշխատանքին: Սուրիայէն
ներս տեղի ունեցող կացութեան բարելաւումը
նաեւ մեր ժողովուրդը պէտք է մղէ աւելի
կազմակերպ ու հետեւողական կերպով զօ-
րակից ու մասնակից դառնալու Սուրիոյ
հայութեան վերականգնումին: Արդարեւ,
նկատի ունենալով Սուրիոյ մեր պատմական

գաղութին յատուկ կարեւորութիւնը, ամէն
իմաստով, Սուրիոյ հայութեան տազնապը
նկատեցինք համազգային առաջնահերթութիւն:
Սուրիոյ հայութեան վերականգնումը եւս հարկ
է նկատել՝ համահայկական ճիգով իրագործելի
անյետաձգելի առաջնահերթութիւն:

Սուրիոյ հայ համայնքի վերականգնումը
պէտք է ըլլայ համահունչ գաղութի ներքին
դրուածքին ու զինք շրջապատող պայմաններուն
ու մտահոգութիւններուն: Վերականգնումին
հարկ է մօտենալ համապարփակ հայեցակէտով,
ո՛չ թէ սոսկ Ֆիզիքական մարզէն ներս
քանդուածը վերաշինելով եւ կորսուածը վերա-
կանգնելով, այլ ներկայ հրամայականներու եւ
մարտահրաւէրներու լոյսին տակ համայնքի
վերակազմակերպումը նկատելով կիրակէտը
մեր ծրագրումներուն ու աշխատանքներուն:
Այս շրջագծէն ներս, յատուկ կարեւորութիւն
պէտք է տրուի գաղութի մը ամրութեան ու
կենսունակութեան հիմքը հանդիսացող կառոյց-
ներուն. բնականաբար, առանց անտեսելու դէպ-
քերու պատճառով այլազան կորուստներու
ենթարկուած մեր ընտանիքները:

Վերականգնումի աշխատանքները անհրա-
ժեշտ է որ կատարուին յառաջատուական ըն-
թացքով եւ հետեւեալ հանգրուաններով. -

ա. Հարկ է առաջին հերթին ամբողջական ու
մանրամասն ցանկագրումը եւ արժեւորումը
կատարել եղած վնասներուն եւ ապա հա-
մայնքը վերականգնելու առաջնորդող առաջնա-
հերթութիւններուն ճշգրտումը:

բ. Վերականգնումի գործընթացը հարկ է
հեռու պահել պարագայական լուծումներէ
ու ժամանակաւոր կարգադրութիւններէ եւ
որդեգրել մասնագիտական մօտեցում եւ լուրջ
ու իրապաշտ ծրագրում:

գ. Վերականգնումի ծրագիրին պատրաստու-
թիւնը պէտք է ըլլայ համապարփակ, սակայն
անոր գործադրութիւնը՝ հանգրուանային, նկա-
տի ունենալով համայնքը շրջապատող պայ-
մաններու հոլովոյթը:

դ. Շարք մը տուեալներէ մեկնած, Հալէպը
պէտք է դառնայ առաջին հանգրուանը վերա-
կանգնումի գործընթացին՝ առանց անտեսելու
հայաստան այլ շրջանները:

ե. Վերականգնումի ծրագրի պատրաստու-
թիւնն ու գործադրութիւնը պէտք է կատարուի
Սուրիոյ հայութեան միացեալ ճիգով: Վերա-
կանգնումի կամքին ու յանձնառութեան
կողքին, անոր իրագործման նպաստող նիւթա-

կան կարելիութիւններու հայթայթումը կը նկատենք խիստ կարեւոր: Արդարեւ, Սուրբոյ հայութեան վերականգնումը նիւթական լայն հնարաւորութիւններ պահանջող լայնածաւալ ու բազմերես ծրագիր է: Հետեւաբար, ինչպէս վերականգնումի աշխատանքը, նոյնպէս նիւթական կարելիութիւններու ստեղծումը հարկ է որ ըլլայ ծրագրուած մօտեցումով: Մեր պատկերացումով, անհրաժեշտ է այս ուղղութեամբ հետեւեալ քայլերուն դիմել.-

1. Սուրբոյ հայութեան երեք համայնքներու, կուսակցութիւններու ու բարեսիրական միութիւններու վերին մարմիններու ներկայացուցիչներու մասնակցութեամբ Կեդրոնական Մարմին մը յառաջացնել նախաձեռնելու ու վերահսկելու վերականգնումի աշխատանքները: Յիշեալ մարմինն կեդրոնատեղին պէտք է ըլլայ Հալէպի մէջ:

2. Ապրիլ 2017-ին վերականգնումի աշխատանքին նպաստելու պատրաստ գաղութներու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն եւ ազգայիններուն հանդիպում մը կազմակերպել, Հալէպի կամ Լիբանանի մէջ:

3. Վերականգնումի ծրագիրը պատրաստած մասնագէտներ համապարփակ զեկոյցներ պէտք է ներկայացնեն ներկաներուն՝ իւրաքանչիւր ծրագրին կցելով նախահաշիւ պիւտճէն եւ անոր իրագործումին ժամանակացոյցը:

4. Տրուած զեկոյցներու գծով կատարուած լուսաբանութիւններէ եւ քննարկումներէ ետք, սպասելի է որ վերականգնումի ծրագիրները որդեգրուին հանդիպումին մասնակցողներուն կողմէ, համաձայն իրենց նախասիրութեան:

5. Որդեգրուած ծրագիրներուն իրագործումը

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 թիւին:

պէտք է հետապնդուի Սուրբոյ հայ համայնքի Կեդրոնական Մարմնի կողմէ նշանակուած մասնագիտական յանձնարումքի ու միաժամանակ տուեալ ծրագիրը ստանձնած անհատին, կազմակերպութեան կամ գաղութին կողմէ:

Վերոյիշեալ աշխատանքները հարկ է որ կատարուին մասնագիտական մօտեցումով, ծրագրուած կերպով, յստակ համարատուութեամբ եւ տազնապահար գաղութ մը միասնաբար վերականգնելու պատասխանատու ոգիով:

16-25 սարիք

ԵՐԻՏԱԱՐԴ-

ԵՐԻՏԱԱՐԴՊՈՒՀԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

26-40 սարիք ԵՐԻՏԱԱՐԴ-

ԵՐԻՏԱԱՐԴՊՈՒՀԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՆԶԻ

ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ

ԵՐԻՏԱԱՐԴ

2 ԽՄԲԱԿՆԵՐ

Սերտողութիւնները կը
կատարուին հայերէնով,
Կիրակի առաւօտները՝
եկեղեցոյս հոգաբարձութեան
ժողովասրահին մէջ:

Յատկեալ
մանրամասնութեանց համար
դիմել
եկեղեցոյս դիւանատուն՝
514 331 5445 x202 թիւին,
կամ գրել
eglise@sourphagop.net
ե-հասցէին